

տեն կարծես թէ կորսուածի պէս մնաց քաղքին ընդարձակութեանը մէջ, քանի որ գեռ ինչ ընելիքը չէր գիտէր ու շուարեր եր թէ ինչպէս պիտի կարենայ յանձնարարական թղթերը՝ որոնց որ ուղղուած էր՝ ձեռքերնին հասցընել. աս բանս իրեն համար անգին ժամանակի մը կորուստ եղաւ :

Ա աճառականը իրեն գործոցը զբաղած՝ մոռցաւ բոլորովին զի՞րապօվիա թէպէտ և յանձն առած էր (Ո.\*\*\* իշխանուհւոյն տունը տանելու զինքը. բայց գեռ խստմունքը ըկատարած սափառուեցաւ գեպ՝ ՚ի Ռիկա ձամբար ելլել, և յանձնեց զի՞րապօվիա իր կնոջը որ շատ մարդասիրութեամբ կը վարուեր հետը, բայց առանց ամենելին իրեն խորհրդոցը կատարմանը օգնելու :

Դ.\*\*\* խաթունին նամակը ՚ի, եւագետոյն միւս կողմը բնակող խաթունի մը ուղղուած էր. և որովհետեւ հասցեն որոշ և մանրամասն զրուած էր՝ Ռիրաքովիա վաճառականին ձամբայ ելլելն քանի մը օր վերջը անոր կնոջը հետ ձամբայ ելաւ գեպ՝ ՚ի Ա ասիլի-( )ս. զրով : Ռայց ՚ի, եւա ձաթուած էր և սառերը մօտ էին լուծուելու և ոստիկանները չէին թողուր անցնիլ . Ռիրաքովիա այս ձախորդութեան վրայ վըշտացած ետ գարձաւ : Լոյս տագնապին և մտածութեանցը մէջ վաճառականին տունը գտնուող անփորձ մարդ մը ձախող խորհուրդ մը տուաւ իրեն, որ աղերսագիր մը տայ ծերտկուտին իրեն հօրը քննութիւնը նորէն սկսելու համար, և յանձն առաւ այս բանս յարմարցնելու համար անձամբ զրագիր մ'ալ գտնելու : Ռիրաքովիա Ռոպոլսքի քաղաքապետին ընծայած աղերսագրին յաջողիլը մտածելով համոզուեցաւ : Ռիրուեցաւ ուրեմն անդէպ ոձով աղերսագիր մը և տրուեցաւ Ռիրաքովիայի ձեռքը առանց ամենելին սորվեցնելու թէ ինչ կերպով պիտի ներկայանար : Լոյս խորհուրդս արգելք եղաւ Ռիրաքովիայի փութով իրեն յանձնարարութեան թղթերը որոնց որ ուղղուած էին ձեռքերնին հասցնե-

լու, որով շատ աւելի օգուտ կրնար ըլլալ իրեն :

ՔՍԱՎԻԵ ՏԸՄԴՐԸ

Կը շարունակոյի :

### Եռունկ:

Լ, թէ Լ, գուարդ Լունկ անգղիական եկեղեցւոյն քաջ աստուածաբան մը միայն եղած ըլլար, իր կեանքն յետագայից այնչափ հետաքրքրական բան մը չէր ըլլար : Լոյ արդիւնքն անծանօթ էր Լուրոպիոյ, և հայրենեացը մէջ անունը գրեթէ մուցուած էր . բայց այնպիսի քերգող մը և նախատիպ զրիչ մը ըստին քեան Աուիֆդի, Շ աթսալըրի, Փոփի, Լատիսընի, Աիշարտսընի և ասոնցնման ներուն հաւասար կրնայ ընկերել յանմահութիւն, որոնց ինքը բարեկամ եղած էր, կամ ուսումնական ընկեր : Ամն ունեցաւ Դիտոլ ըստւած համբաւաւոր օրագրին, և աւելի երկարակեաց եղաւ քան զվերջինն այն անուանի հեղինակաց խմբին, որոնք Կնգղիոյ փառքը պայծառացուցին :

Լունկ վերսոյիշեալ մատենագրաց պէս կիրթ ախորժակ չուներ . բայց կարծես թէ չուզեց ալ ունենալ : Հետեղութեան չափազանց թշնամի ըլլալով, իր երեւակայութիւնն ինքն իրեն թողուց . և ինչպէս որ նախատիպ ըլլալու ծնած էր, ուզեց այնպէս ալ մընալ և իբրեւ իրեն յատուկ պարտք մը ՚ի գործ դնել : Աովորսական ձամբաները թողլով, գնաց գերեզմանաց մէջ իր անմահութեան արձանը կանգնելու . և կարծես թէ ուզեց այնպիսի տեղ մը զայն դնել, ուր վախ չկար ուրիշ նախանձորդէ մը հետեւուելու : Ռայց թէ և մի և նոյն ախորժակ և մի և նոյն ցաւեր զուրիշներն ալ հոն ձգելու ըլլային, մէկէն կը տեմնային անոնք, որ եթէ դիւրին է աւելի կանոնաւոր և բարեյարմար կոթող մը կանգնել, բայց

այն բարձրութեանն համնիկ՝ ամենագժուար:

Իր Գիշբետ կամ Ոշբետ քերդուածը շատ թերութիւններ ունի, զորոնք խիստ զիւրաւ մէկը կրնայ զգալ և անոնցմէ խորշել. բայց այսու հանդերձ մարդկային վիճակի թշուառութեանց վրայ զրուած գերազանց եղերերդութեանց մէկն է, և վսեմ յիշատակարան մը յորում բանաստեղծութեան մեծամեծ գեղեցկութիւնքն կը փայլեն, կրօնից և բարոյականի մեծագոյն ձըշմարտութեանց հետ միացած: Ի՞նչնարին է որ մէկը կարգայ այդ զրուածքը, որ միակ է իր տեսակին մէջ, և չփափաքի աւելի մանրամասն գիտնալ այնպիսի մարդու մը նկարագիրն և կենաց զըլիսաւոր հանգամանքն, որ եղական բան էնակ անոնց համար որ բնութեամբ առանձնասեր էն. ևս առաւել սովորական կարգացող անձանց և անոնց համար որ կեանքերնին առանց մոածութեան մը կ'անցնեն:

Եյունկ ծնաւ յամին 1684. իր հայրն Եղուարդ, նախներեւ Աւրեմի և ժողովը գաղապետ Բժամի, 'ի հեմըր, խաւրեց զինքը (Հ)քսֆըրտի գալրոցը, ուր ուսմնացը ընթացքն ըրաւ: Ի՞սանուցորս աւարուան իրաւադիտութիւն սորուեցաւ (Հ)լուսի գալրոցը. բայց իր աշխոյժ երևակայութիւնն այս ցամաք ծանօթութեամբք գոհչ չեղաւ. և իրնորածին հանձարոյն բերումը կանուխ քան զժամանակին զինքն 'ի բանաստեղծութիւն կը յորդորէր. պատանեկութեան ժամանակին՝ փառաց յօժարութիւն մը կը զգար, որ սովորաբար մեծամեծ հանձարներու նշան է, զոր բազդ շինելու փափաքով կը փայնեն մարդիկ: Եյունկ երկար ատեն բաղդի ու փառաց ետեւէ եղաւ. և վերջինը միայն կրցաւ ձեռք բերել, զոր մարդիկ պարտական են շնորհելու հանձարոյն:

Ի՞սաջինն երկասիրութիւնն եղաւ Բառակիւս ողբերդութիւնն, յամին 1719, որուն երկու տարի վերջն յաջորդեց Վեճինդրանենը: Ի՞սա երկու քերդուածքը, և մանաւանոր Վերջին դադաս.

տան, Զօբութիւն կրօնից կամ Սէր պարտեալ ըսուած բանաստեղծութիւնքը ծանօւցին Կնգղիոյ, որ ուրիշ մատենագիր մ'ալ կը մանեւ անսնց դասը որք այն ատեն ազգը կը զարմացնէին: Ո՞եծամեծք ուզեցին հետը ծանօթանալ, և մասնաւորապէս մէկն ուզեց իրեն օգտամատոյց ըլլալ. այս է Ուորթըն դուքսը որ յայտնապէս զինքն անոր Ո՞եկենասն անուանեց, և գաղանի բարերարն եղաւ, ու անոր աղաչանօքն այլոց ալ բարերարութիւն ըրաւ: Եյունկ ցաւօք կը տեսնէր որ (Հ)լուսի գալրոցին նոր շինութիւնքը, ուր ինքն օրէնսգիտութիւն կը սորվէր, ստակի պատշառաւ գաղրած էին. ուստի թախանձեց գուքսն որ մեծ գումարի սարգեմը ընէ. և այս առատապարգև նպաստով չէնքը լրացաւ. որով և նորընձայ հեղինակն, իր համբաւոյն այս ազնուական կիրաւութեանը համար զքսին ընդունած հասարակաց շնորհակալութեանցը մասնակից եղաւ:

Չերընսդըրի ատեանին մէջ պաշտօն մը առաջարկուած ըլլալով, Եյունկ անոր հետամնւաւ եղաւ. և իր տեղոյն օրինացը խիստ հմուտ ըլլալով, կրնար զայն ստանալ, և զքսին յանձնաբարութիւնն ալ իրեն մեծ նպաստ էր: Ի՞սայս սակայն չկրցաւ յաջողցնել. և հաւանականբար իր պաշտպանն իրմէտ աւելի աս բանին վրայ գառնացած պիտի ըլլայ:

Երբոր մարդ իր ախորժակէն կը խոտորի, առաջին արգելքն որ զինքն իր նոր ձամբուն մէջ կը կեցնէ, սովորաբար բաւական կ'ըլլայ զինքընորէն առջի ձամբան դարձնելու: Ալ թողու Եյունկ իրաւագիտութիւնը զոր չէր կրցած բանի մը բերել, և իր մոտացը բերմամիլը բարոյական և աստուածաբանական ուսմանց պարապելով, եկեղեցական վիճակ կը մտնէ: Պարեծէ մէկէն թագաւորին մատրանապետ անուանեցաւ. և երկու տարի վերջը, յամին 1730, այն գսլուց որուն ինքն անդամ էր, տուաւ իրեն Ուելլինի ժողովրդապետութիւնը, 'ի հերաֆըրացը, որուն եկամուտն էր երեք հարիւր ստերլին, 'ի բայց առեալ

անոր վիճակեալ երկիրներն։ Հետեւ եալ տարին ելաւ անդամակցութենէն, և Իշխիլո կոմսին՝ Պըդգի-Ի աղջը կանն հետ ամուսնացաւ։ Եթէ բաղդին գանգատելու բան մը ունէր մինակ ժողովրդապետութիւն մը ձեռքն ունենալուն համար, բայց մէկալ կողմանէ այնպիսի ամուսնոյ մը վիճակեցաւ, որ մեծամեծ բարեմասնութեամբք զարդարեալ էր, և մանաւանդ սքանչելի քաղցրաբարոյութեամբ, որ գրաւոր մարդու կնկան մը համար կարեոր ձիրք մըն է։

**Չ**ափաւոր հասոյթավ ժողովրդապետութիւն մը, առաքինի ամուսին մը, և եօթանասունուինը տարուան՝ Իալլէսի իշխանուհւոյն առանձին տաներէց ըլլալու պատիւն, աչա ասոնք եղան բոլոր իր կենացը մէջ բախտէն ընդունած պարգևներն։ Ո՞իշտ արքունեաց մէջ պատուաւոր՝ բայց անօդուտ ընդունելութիւն մը գտաւ։ Այսկայն մեծապէս սիրելի էր Իալլէսի իշխանին, և վերջապէս բարձր պաշտօն մը կ'ընդունէր, թէ որ 1751<sup>ն</sup> իշխանին մեռնելովը բոլոր ակնկալութիւնքն պարապ չելլէյին, որով կը յուսար գեռ աւելի մեծագոյն եկեղեցական պատուոյ մը հասնելու։

**Օ** արմանալի է արդարե տեսնել թէ ինքն իսկ Եսունկ իր Ողբոյը մէջ կը խոստովանի թէ ատեն մը պալատական եղած էր։ Ի՞նչպէս կրնան միաբանիլ արքունիք մը և հանձարեղ անձ մը, որ միայնութիւն կը սիրէ, տխուր և խորին մտածութեամբք կը ձարակի, և միշտ գերեզմանաց մէջ անմահութեան վրայ կը խոկայ։ Պէտք չէ ուրեմն կարծել որ ամբողջ կենացը մէջ միշտ նոյն խորին մազգոտութիւնն ունեցած ըլլայ, ինչ որ իր Գէլէրայը մէջ կը յայտնէ։ Բայց անտարակոյս միշտ ունեցած է այն առանձնութեան բերմունքը որ բնական է զգայուն սրտերու, և զրաւոր մարդկանց ալ կարեոր։ Իր յանձն առած վիճակին սէրը, որուն պարտուցը կատարող եղաւ, իր կրօնական եռանդը, և անոր սորվեցուցած տեսական և գործնական ձմարտու-

թիւններ խոկալու սովորութիւնը պէտք էին իր այս բէրմունքն աւելի ևս սասակացնել. բայց այնու հանդերձ ազատ չեղաւ առաջին կարգի հանձարներու բընական փառափարութենէն, որ առաքինի մարդու մը լաւութեանցն հետ պալատականի մը ակնկալութիւններ կը խառնէր։ Այն միջոցին որ արդէն իսկ փորձն ու տարիները զինքն այս պատրանքէն ազատած էին, և ահա ցաւն եկաւ սրտին մէջ խզեց բոլոր բաղդի փափաքներն և միայնութեան մէջ ընկըզմեց։

Իբրև յամին 1741, մահը՝ գրեթէ երեք ամսուան մէջ յափշտակեց իրմէն իր կինն և անոր առաջին էրկանէն ունեցած երկու զաւակներն, զորոնք արժանապէս իր հարազատ որդւոցը պէս գորտանգք կը սիրէր։ Այս երեք յաջորդական կորուստներն վաթսնամեայ ծերոյն սիրտը դառնութեամբ լեցուցին։ Այն ատեն, աշխարհքէ ու կեանքէ ձանձրացած, և իր ցանկալի սիրելեացմէ յանկարծ զրկուած, կերպով մը կենդանի իջաւ իր սիրելեաց գերեզմանը, թաղուեցաւ անսնց հետ, և իր ու աշխարհի մէջ վարագոյր մը քաշելով, սկսաւ փնտուել իր միաթարութիւնքն այն ապագային մէջ ուր թըշուան ու տառապեալը յօժարակամ կը դիմեն ու կ'սպաւինին։ Իր արտասուքն իրեն անմահութիւն պտղաբերեցին։ և իր հանձարը, ցաւոցը մէջ խօսուն և գործունեայ, կարծես թէ այն երեք կայծականց հարուածներուն կը սպասէր, որ մահուան մւայլ կայեանք սրանայ, և մոնէ մտօքը մինչև երանութեան գաւառը, առ որ մահը անցք մըն է։ Այս ահա եղաւ առիթ իր գեղեցկահիւս Գիշերք քերգուածոյն, որ իր երկափարութեանցն աւելի նախատիպն է, և որ միայն իրեն յատուկ է։ Անգղիացի օրագիր մը կ'ըսէ թէ, շատերը փորձեցին իրեն նմանելու, և ոչ ոք կըցաւ յաջողցընել, և գեռ այս տեսակ քերգուածի մէջ իրեն նախանձորդ մը չունեցաւ։ որուն համար ստացած գովեստներն անքաւ են։ Բալոր

Ժամանակակից մատենագիրք, թէ ողբ-  
բազանը լըլան և թէ արտաքին, հռչակե-  
ցին զտարաբաղդ քերդողը, որ այնպէս  
ձարտարութեամբ կրցաւ իր ցաւերն  
այն տողերուն մէջ, և այն տողերէն ալ  
ընթերցողին զգայուն սիրտն անցնել,

քաղցր տրտմութե՛ մը լեցնելով զայն։  
Ի՞հաւասիկ այս քերդուածին գրե-  
թէ ամբողջ ընրորդ գիշերը, իր  
Վարդէս աղջկան մահուանը վրայ, որ  
սրտաշարժ և գեղեցկահիւս երգերէն  
մէկն է։

### ՆԱՐԴԻՍ

Զայս ևս ահա զարթնում նըւագ, խօլականայն ի յանըրջոց  
Ուօթափեալ զանձն իմ ընդոստ, ուր քուն ըզմիտս առեալ տաներ։  
Խթրե՛ւ զի մութ զիշերին զտիեզերօք պատի մըուայլ։  
Լոկ նըշոյլ բանին միայն հանդէպ հոգւոյս փայլատակէ։  
Ո՛Տ ի լալ սոսկ արտասուաց աչք իմ բանին ի խաւարի։  
Վրդ տարփաւորն անհամբեր եւ լի սըրտիւն յուսապատար  
Յերջանիկն ընթանայ վայր, ուր սիրուհին սպասէ նըմին։  
Այնու ընդհատ ուխտապահ ի կիտադրեալըն ձըզգրիտ ժամ  
Հասեալ կամ ի տեղին ուր ինձ ցաւոց մընայ կըսկիծ։  
Ի՞հասիկ որ առ յինէն երդուեալ նըմին ժամն այս պատեհ։  
Ի՞հա ժամն յոր ես եւ ցաւքս ի միասին տըքնեալ անքուն  
Բզգիշերս ամենայն կամք ընդ իրեարըս խօսակից։

ՈՎ լուսին, ցաւած սըրտից աստուածեղէնդ հաշտ էութիւն,  
Ուր ի լոին այս ժամու իշխես խաղաղ եւ միայնիկ  
Ի կաճառս անդ աստեղաց, էջ ի գահէդ արծաթափայլ,  
Լու թողեալ զօդս եկ շընչեա յիս տաղս երգոց՝ երկնից ի ձահ։  
Դառ արփւոյն քոյր կաթոգին, որ ի նորա մեկնելն ի բաց,  
Պերճապայծառ ըզգընտից վարես զընթացուն զիշերի։  
Դառ լըսես ըզմըրմունջս յարմարաւոր շարժմանց նոցին,  
Ուր երբէք ի հեռաբնակ մահացուաց ունկն ոչ ժամանեն.  
Հաճեսջիր քաղցր երազով զերկնից նըւագս յիմ սիրտ մընչել.  
Լու իցիւ ձայնք հընչմանց քաղցրաբարբառ նոցին երգոց  
Ի ՈՒուսային իմ կեղերջս ողբանըւագըս խառնեսցին։

Ե՛Տ, աւաղիկ տրոփէ սիրտս ի տըրտմագին քոյ աղդմանէդ,  
Ուափ անցանելով ի խոր սըրտիս ցաւագնելց.  
Ակրելք քեզ այս ձեռնարկս իմ լինիցի և ոչ ումպէտ.  
Խթրեղ գողտը եւ սպարկեշտըն գեղանսոյ կարօտով լամ...  
Տըլսուր եւ տմոյն թըլսիմ դիտել ըզքեղ, Վարդէս իմ սիրելի։  
Շարբառդ յոզիս իմ ազդէ, եւ իբր ասես. “ՈՒութ զիս կալաւ.  
Ուանկութիւն եւ յոյսք քաղցրիկ ի մոայլ յաւէժ թաթաւեցան,,.  
Ե՛Տ, այդչափ չեր մըթազգած խաւար շիրմին Փիլանդրոսի,  
Լու ոչ հանգոյն մահառիթ մէգ աննըշոյլ պատեաց զինե։  
ՈՎ հանգոյց դառն աղիտից որ մի զմիոյ զան հասանեն,